ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՇՄՆ-ԱՇՁԲ-26/03

ք.Երևան «06» «03» 2026թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս.Աթանեսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կարս Գրուպպ 1» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ.Ղուկասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի Հավելված №1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով և Հավելված №2-ով՝ ծավալաթերթ-նախահաշվով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Շրջակա միջավայրի նախարարության վարչական շենքում ներքին հարդարման կամ վերանորոգման» աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2. Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև Պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և կատարման ժամկետը սահմանվում է Հավելված №1-ով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1. Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով (բացառությամբ Պատվիրատուի տրամադրած նյութերի) և միջոցներով:

2.2. Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2. Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3. Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4. Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը,

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5. Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6. Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7. Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1. Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2. Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3. Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4. Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5. Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1. Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2. Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1. Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ Պայմանագրի Հավելված №2-ով սահմանված ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

3.4.2. Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3. Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և Պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4. Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5. Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6. Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7. Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8. Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9. Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10. Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №5.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված №5):

4.2. Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3. Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.4. Եթե պայմանագրի 4.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5. Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6. Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.
2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.
3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.
4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝
ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,
բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.
5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է մինչև **1 000 000 (մեկ միլիոն)** ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, բացառությամբ ԱԱՀ-ն: Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.2. Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ Հավելված №4-ով նախատեսված ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.3. Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ**, որտեղ՝

1) ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

2 ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

3) ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

4) ՎԳ-ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և Պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2. Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3. Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը Պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4. Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է Պայմանագրի Հավելված №3-ով սահմանված ցանկով պատասխանատվության միջոցները:

6.6. Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2. Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ

գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6. Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9. Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10. Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք

գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (Հավելված №6) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12. Պայմանագիրը կազմված է 7 (յոթ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի Հավելված №№ 1-ը, 2-ը, 3-ը, 4-ը, 5-ը, 5.1-ը և 6-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«Կարս Գրուպպ 1» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական տուն 3	ք. Երևան,Կենտրոնական թաղամաս,Արգիշտի 11/4
ՖՆ գործառնական վարչություն	«Ակբա բանկ» ԲԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 220410511996000
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02874719
Շրջակա միջավայրի նախարարության	«Կարս Գրուպպ 1» ՍՊԸ-ի
գլխավոր քարտուղար	տնօրեն
Ս.Աթանեսյան	***Հ.Ղուկասյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված №1
«06» «03» 2026թ. կնքված
«ՇՄՆ-ԱՇՁԲ-26/03» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն
գլխավոր քարտուղար
Ս.Աթանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Կարս Գրուպպ 1» ՍՊԸ
տնօրեն
Հ.Ղուկասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	**տեխնիկական բնութագիրը**	չափման միավոր	ընդհանուր գին	ընդհանուր քանակը	Կատարման	
						հասցեն	ժամկետը
1	45461100	Շրջակա միջավայրի նախարարության վարչական շենքում վերանորոգման աշխատանքներ: Ծավալաթերթ-նախահաշիվը համաձայն Հավելված №2-ի:	դրամ	1 000 000	1	ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք 5-րդ հարկ Շրջակա միջավայրի նախարարություն հասցեում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026թ դեկտեմբերի 10-ը:

Հավելված №2
«06» «03» 2026թ. կնքված
«ՇՄՆ-ԱՇՁԲ-26/03» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն
գլխավոր քարտուղար
Ս.Աթանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Կարս Գրուպպ 1» ՍՊԸ
տնօրեն
Հ.Ղուկասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Շրջակա միջավայրի նախարարության վարչական շենքում ներքին հարդարման կամ վերանորոգման» աշխատանքների

N	**Աշխատանքի անվանումը**	Չափման միավորը	Միավորի գինը ներառյալ վերադիր ծախսերը, շահույթը և հարկերը
1.	հատակի կամ պատի սալիկների քանդում և աղբի տեղափոխում աղբավայր	քմ	600
2.	հատակի կամ պատի սալիկապատում, ներառյալ անհրաժեշտ հարակից նյութերը	քմ	12 000
3.	հատակի կամ պատի սալիկապատում, ներառյալ սալիկը և անհրաժեշտ հարակից նյութերը, գույնի և ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ	քմ	8 000
4.	միջնապատերի քանդում և աղբի տեղափոխում աղբավայր	խմ	5 000
5.	միջնապատերի մոնտաժում 10x20x40 սմ ցեմենտաշաղախե աղյուսով, ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը	քմ	4 500
6.	Ցեմենտաշաղախե սվաղ մինչև 2 սմ հաստության, ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը	քմ	2 500
7.	Ցեմենտաշաղախե սվաղ 2 սմ ավելի հաստության, ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը	քմ	3 000
8.	պատերի սալիկների քանդում և աղբի տեղափոխում աղբավայր	քմ	600
9.	Պատերի կամ առաստաղի մաքրում հին ներկից և աղբի տեղափոխում աղբավայր	քմ	600
10.	Պատերի կամ առաստաղի քսահարթում գիպսոնիտով, ներկման համար մակերեսի մշակում, ներառյալ անհրաժեշտ հարակից նյութերը	քմ	2 000
11.	Պատերի կամ առաստաղի բարելավված ներկում կիսափայլուն լատեքսային ներկով, ներառյալ անհրաժեշտ հարակից նյութերը	քմ	1 000
12.	Ներկման աշխատանքներ մետաղական, փայտե կամ պլաստիկե մակերեսներին, ներառյալ ներկը, մակերեսների մշակումը և անհրաժեշտ հարակից նյութերը	քմ	2 500
13.	Փոշեներկման աշխատանքներ մետաղական, փայտե կամ պլաստիկե մակերեսներին, ներառյալ ներկը, մակերեսների մշակումը և անհրաժեշտ հարակից նյութերը	քմ	5 000
14.	կախովի առաստաղի քանդում և աղբի տեղափոխում աղբավայր	քմ	1 000
15.	կախովի կամ ձգվող առաստաղի մոնտաժում, ներառյալ անհրաժեշտ հարակից նյութերը և կախովի կամ ձգվող առաստաղը, գույնի և ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ	քմ	6 000
16.	լվացարանի ապամոնտաժում և աղբի տեղափոխում աղբավայր	հատ	1 000
17.	լվացարանի մոնտաժում, ներառյալ անհրաժեշտ բոլոր կցամասերը և գլխավոր ծորակը, ներառյալ լվացարանը (երկթաս, ջրահեռացման սիֆոններով, չափսը 50x100x30 սմ, թույլատրելի շեղումները մինչև 5 սմ) և անհրաժեշտ բոլոր նյութերը, գույնի և ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ	հատ	100 000

18.	լվացարանի մոնտաժում, ներառյալ անհրաժեշտ բոլոր կցամասերը և գլխավոր ծորակները, ներառյալ լվացարանը (կերամիկական, խոնավակայուն հենակմախքով, երկփեղկ դռներով կամ դարակներով, չափսերը՝ 45x100x85 սմ կամ պատից կախովի 45x100x50 սմ, թույլատրելի շեղումները մինչև 5 սմ) և անհրաժեշտ բոլոր նյութերը, գույնի և ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ	հատ	80 000
19.	լվացարանի մոնտաժում, ներառյալ անհրաժեշտ բոլոր կցամասերը և գլխավոր ծորակները, ներառյալ լվացարանը (կերամիկական, ոտնակով, չափսերը՝ 45x50x85 սմ, թույլատրելի շեղումները մինչև 5 սմ) և անհրաժեշտ բոլոր նյութերը, գույնի և ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ	հատ	27 000
20.	լվացարանի ծորակի մոնտաժում, ներառյալ ծորակը, գույնի և ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ	հատ	20 000
21.	լվացարանի ծորակի մոնտաժում	հատ	3 000
22.	զուգարանակոնքի ապամոնտաժում և աղբի տեղափոխում աղբավայր	հատ	2 000
23.	զուգարանակոնքի մոնտաժում, ներառյալ անհրաժեշտ բոլոր կցամասերը, ծորակը և զուգարանակոնքը	հատ	50 000
24.	էլեկտրական ջրատաքացուցիչի մոնտաժում, ներառյալ անհրաժեշտ բոլոր կցամասերը և գլխավոր ծորակը և ջրատաքացուցիչը	հատ	8 000
25.	էլեկտրական գծային լամպի տեղադրում, ներառյալ գծային շարժական կցորդիչը (2 կամ 3 մետրանոց) և լամպը	հատ	3 000
26.	էլեկտրական գծային լամպի տեղադրում, ներառյալ գծային շարժական կցորդիչը (2 մետրանոց), մեկ գծամետրին մեկ լամպ հաշվարկով, ներառյալ լամպերը և անհրաժեշտ բոլոր նյութերը, գույնի և ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ	հատ	15 000
27.	էլեկտրական գծային լամպի տեղադրում, ներառյալ գծային շարժական կցորդիչը (3 մետրանոց), մեկ գծամետրին մեկ լամպ հաշվարկով, ներառյալ լամպերը և անհրաժեշտ բոլոր նյութերը, գույնի և ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ	հատ	21 000
28.	էլեկտրական խնայող լամպի տեղադրում, հաշվարկված լուսավորություն ստանալու ապահովմամբ, ներառյալ լամպը և անհրաժեշտ բոլոր նյութերը, գույնի և ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ	հատ	4 000
29.	օդափոխիչի տեղադրում	հատ	1 500
30.	դռան ապամոնտաժում և աղբի տեղափոխում աղբավայր	հատ	3 000
31.	դռան մոնտաժում, ներառյալ 80x200 չափսի (թույլատրելի շեղումը 5 սմ) փայտե կմախքով ու փայտե խտանյութով երեսապատված դուռը և մոնտաժման համար պահանջվող նյութերը, գույնի և ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ	հատ	80 000
32.	օճառամանի մոնտաժում, ներառյալ օճառամանը և անհրաժեշտ այլ նյութերը, գույնի և ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ	հատ	3 000
33.	զուգարանի թղթի կախիչի մոնտաժում, ներառյալ զուգարանի թղթի կախիչը և անհրաժեշտ այլ նյութերը	հատ	3 000
34.	ձեռքերը չորացնող սարքերի մոնտաժում, ներառյալ ձեռքերը չորացնող սարքը	հատ	2 000
35.	կախիչի մոնտաժում, ներառյալ կախիչը	հատ	1 000
36.	մուտքի դռան տարբերանշանի մոնտաժում, ներառյալ տարբերանշանը	հատ	500
37.	հայելու մոնտաժում, ներառյալ մոնտաժման համար պահանջվող նյութերը, ներառյալ հայելին	հատ	4 000
38.	անջատիչի կամ վարդակի մոնտաժում, ներառյալ մոնտաժման համար պահանջվող նյութերը, ներառյալ անջատիչը կամ վարդակը	հատ	1 000
39.	անջատիչի կամ վարդակի մոնտաժում, ներառյալ մոնտաժման համար պահանջվող նյութերը, ներառյալ անջատիչը կամ վարդակը և անհրաժեշտ այլ նյութերը	հատ	3 000
40.	անցքի բացում, տրամագիծը 100 մմ, պատի հաստությունը մինչև 50 սմ	հատ	10 000
41.	անցքի բացում, տրամագիծը 150 մմ, պատի հաստությունը մինչև 50 սմ	հատ	15 000
42.	անցքի բացում, տրամագիծը 151-300 մմ, պատի հաստությունը մինչև 50 սմ	հատ	25 000
43.	Մալուխի անցկացում 2x1.5 պղնձալար, ներառյալ նյութերը	գմ	300
44.	Մալուխի անցկացում 2x1.5 պղնձալար, ներառյալ նյութերը, անհրաժեշտության դեպքում սակառի տեղադրում կամ ակոսի քանդում և քսահարթում	գմ	650
45.	Մալուխի անցկացում 1x1.5 պղնձալար, ներառյալ նյութերը	գմ	200

46.	Մալուխի անցկացում 1x1.5 պղնձալար, ներառյալ նյութերը, անհրաժեշտության դեպքում սակառի տեղադրում կամ ակոսի քանդում և քսահարթում	գմ	550
47.	Մալուխի անցկացում 2x2.5 պղնձալար, ներառյալ նյութերը	գմ	450
48.	Մալուխի անցկացում 2x2.5 պղնձալար, ներառյալ նյութերը, անհրաժեշտության դեպքում սակառի տեղադրում կամ ակոսի քանդում և քսահարթում	գմ	800
49.	Մալուխի անցկացում 1x2.5 պղնձալար, ներառյալ նյութերը	գմ	250
50.	Մալուխի անցկացում 1x2.5 պղնձալար, ներառյալ նյութերը, անհրաժեշտության դեպքում սակառի տեղադրում կամ ակոսի քանդում և քսահարթում	գմ	600
51.	Մալուխի անցկացում 2x4 պղնձալար, ներառյալ նյութերը	գմ	600
52.	Մալուխի անցկացում 2x4 պղնձալար, ներառյալ նյութերը, անհրաժեշտության դեպքում սակառի տեղադրում կամ ակոսի քանդում և քսահարթում	գմ	950
53.	Մալուխի անցկացում 1x4 պղնձալար, ներառյալ նյութերը	գմ	400
54.	Մալուխի անցկացում 1x4 պղնձալար, ներառյալ նյութերը, անհրաժեշտության դեպքում սակառի տեղադրում կամ ակոսի քանդում և քսահարթում	գմ	750
55.	Պատուհանի ապամոնտաժում և աղբի տեղափոխում աղբավայր	քմ	400
56.	Չբացվող փեղկով, սպիտակ պրոֆիլով և երկշերտ ապակիով եվրոպատուհանի մոնտաժում և տեղադրում, ներառյալ նյութերը	քմ	38 000
57.	Բացվող փեղկով, սպիտակ պրոֆիլով և երկշերտ ապակիով եվրոպատուհանի մոնտաժում և տեղադրում, ներառյալ նյութերը	քմ	45 000
58.	Գիպսակարտոնե երկկողմանի միջնապատի կառուցում, ներառյալ անհրաժեշտ նյութերը	քմ	9 000
59.	Գիպսակարտոնե դեկորատիվ առաստաղի կառուցում, ներառյալ անհրաժեշտ նյութերը	քմ	4 500
60.	Փայտե կամ համարժեք այլ նյութերից պատերի դեկորատիվ ձևավորում	քմ	3 000
61.	Φ100 կոյուղագծի ապամոնտաժում	գմ	600
62.	Φ100 կոյուղագծի մոնտաժում, ներառյալ խողովակը և անհրաժեշտ բոլոր նյութերը	գմ	3 000
63.	Φ50 կոյուղագծի ապամոնտաժում	գմ	500
64.	Φ50 կոյուղագծի մոնտաժում, ներառյալ խողովակը և անհրաժեշտ բոլոր նյութերը	գմ	2 500
65.	Φ1/2 մետաղական ջրագծի ապամոնտաժում	գմ	500
66.	Φ1/2 մետաղապլաստե ջրագծի մոնտաժում, ներառյալ խողովակը, ծորակը և անհրաժեշտ բոլոր նյութերը	գմ	2 700
67.	Արհեստական գորգի ապամոնտաժում	քմ	500
68.	Արհեստական գորգի մոնտաժում, ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը	քմ	7 000
69.	Մանրահատակի հղկում շարժական հաստոցով, ներառյալ հղկման համար անհրաժեշտ բոլոր նյութերը	քմ	3 000
70.	Մանրահատակի ամրացում, մշակում, ճեղքերի փակում, ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը	քմ	2 000
71.	Մանրահատակի երեք շերտով բարձրորակ լաքով լաքապատում, ներառյալ համար անհրաժեշտ բոլոր նյութերը	քմ	4 000
72.	Մետաղական ճաղավանդակ ձևի համաձայնեցումը պատվիրատուի հետ, ներառյալ տեղադրումը	քմ	70 000
73.	Ջրի արտահոսքի հայտնաբերման աշխատանք տեպլովիզորով	հատ	45 000
74.	Օդափոխման ցանցի տեղադրում, ներառյալ ցանցը	հատ	4 500
75.	Սիֆոնի տեղադրում, ներառյալ սիֆոնը	լրակազմ	3 000
Ընդամենը* (ՆԳ՝ աշխատանքների կատարման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումար)			**781 500**

***Կապալառուի մասնակցության հայտով ՆԳ՝ աշխատանքների կատարման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարը, կազմում է 693 500 դրամ**:

Հավելված №3
«06» «03» 2026թ. կնքված
«ՇՄՆ-ԱՇՁԲ-26/03» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն
գլխավոր քարտուղար
Ս.Աթանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Կարս Գրուպպ 1» ՍՊԸ
տնօրեն
Հ.Ղուկասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՑԱՆԿ
պատասխանատվության միջոցների

N	Խախտումը	Պատասխանատվությունը *	Խախտումը վերացնելու համար տրամադրվող ժամկետները	Խախտումը կրկնվելու դեպքում տրամադրվող ժամկետները
1	Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով	3 օր	Չի տրամադրվում
2	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով	1 օր	1) Շին. աղբի մասով – Չի տրամադրվում 2) Կենցաղային թափոնների և օտար առարկաների մասով – 1 օր
3	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով	5 օր	Չի տրամադրվում
4	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով	1 օր	Չի տրամադրվում
5	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով	4 ժամ	1 ժամ
6	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով	2 ժամ	Չի տրամադրվում
7	Շինարարական սորուն նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով	Չի տրամադրվում	Չի տրամադրվում

* 1. Սույն աղյուսակում նշված պատասխանատվության միջոցները Կապալառուի նկատմամբ կարող են կիրառվել արձանագրված խախտման վերացման համար պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնողի կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր հավաստման հիման վրա:

2. Պայմանագրով սահմանվող պատասխանատվության միջոցների աղուսյակում նշված բոլոր խախտումների համար տուգանքը Պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսը գերազանցելու դեպքում պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման:

Հավելված №4
«06» «03» 2026թ. կնքված
«ՇՄՆ-ԱՇՁԲ-26/03» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն
գլխավոր քարտուղար
Մ.Աթանեսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Կարս Գրուպպ 1» ՍՊԸ
տնօրեն
Հ.Ղուկասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100	Շրջակա միջավայրի նախարարության վարչական շենքում վերանորոգման աշխատանքներ	-	-	500 000	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	1 000 000	**1 000 000**

Հավելված №5
«_06_» «__03__» 2026թ. կնքված
«ՇՄՆ-ԱՇՁԲ-26/03» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարություն
ք.Երևան, Կառավարական տուն 3
ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011018646
ՀՎՀՀ 02507198

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Կարս Գրուպպ 1» ՍՊԸ
ք. Երևան,Կենտրոնական թաղամաս,Արգիշտի 11/4
«Ակբա բանկ» ԲԲԸ
ՀՀ 220410511996000
ՀՎՀՀ 02874719

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2026թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Կապալային աշխատանքների կատարման պայմանագիր**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_06_» «_03_» 2026թ.
Պայմանագրի համարը՝ «ՇՄՆ-ԱՇՁԲ-26/03»
Պատվիրատուն և Կապալառուն՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2026թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

№	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված №5.1
«_06_» «_03_» 2026թ. կնքված
«ՇՄՆ-ԱՇՁԲ-26/03» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Շրջակա միջավայրի նախարարություն (այսուհետ՝ Պատվիրատու) և «Կարս Գրուպպ 1» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև «_06_» «_03_» 2026 թվականին կնքված № «ՇՄՆ-ԱՇՁԲ-26/03» գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2026 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված №6
«_06_» «__03__» 2026թ. կնքված
«ՇՄՆ-ԱՇՁԲ-26/03» ծածկագրով պայմանագրի

ՏԱՆՈՒՑՈՒՄ

ֆինանսական գործակալի անվանումը հայտնում է, որ.

1. Շրջակա միջավայրի նախարարության և «Կարս Գրուպպ 1» ՍՊԸ-ի միջև «_06_» «__03__» 2026 թ. կնքված «ՇՄՆ-ԱՇՁԲ-26/03» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և _Կապալառուի անվանումը_-ի միջև «_____» «_____» 2026 թ. կնքվել է «__» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,
2. համաձայն Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

_____ (ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» «_____» 2026 թ.